ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՅՈՒՐԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾՆ ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՈՐ ԱՅՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԵԼՈՒ ԲԱՑԱՌԱԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ԷԱԿԱՆՈՐԵՆ ՆՎԱԶԵԼ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 135-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԻՄՔԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

(Քննության է ընդունվել Սահմանադրական դատարանի դատական կազմի 03.03.2021 թ. ՍԴԴԿՈ-12 որոշմամբ)

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Յուրի Բեգլարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածն այնքանով, որքանով որ այն չի նախատեսում մեղադրյալի ազատության մեջ հայտնվելու բացարձակ հնարավորություն բոլոր այն դեպքերում, երբ էականորեն նվազել են մեղադրյալին կալանքի տակ պահելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված հիմքերը, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսել 2021 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 11.00-ին:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա՝ գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 մարտի 2021 թվականի
ՍԴԱՈ-46